Հայտարարություն

Սոցիալական Պաշտպանության Վարչարարության Երկրորդ Ծրագիր

No: 5398-AM

ՀՀ ֆինանսների նախարարության «Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն» պետական հիմնարկը հայտնում է, որ Համաշխարհային բանկի «**Սոցիալական Պաշտպանության Վարչարարության երկրորդ ծրագիր»** վարկային ծրագրի շրջանակում **«ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միջոցով իրականացվող սոցիալական ծրագրերի մոնիթորինգի իրականացման և արդյունավետության գնահատման անձնագրերի, մոնիթորինգային ցուցանիշների մշակման և ներդրման ծառայությունների»** առաջադրանքը իրականացնելու նպատակով հայտարարվում է խորհրդատվական ընկերության ընտրության մրցույթ:

Այս առաջադրանքի նպատակն է նպաստել ՀՀ ԱՍՀՆ իրավասության ոլորտում իրականացվող ծրագրերի մոնիթորինգի և արդյունավետության գնահատման համակարգի կատարելագործմանը և ամբողջացմանը, աջակցել ՄԳ էլեկտրոնային համակարգի մշակման և ներդրման աշխատանքներին:

Ընտրված խորհրդատվական ընկերությունը պետք է իրականացնի հետեւյալ առաջադրանքները՝

1. մշակի ԱՍՀՆ իրավասության ոլորտում իրականացվող ծրագրերի ՄԳ համակարգի կառուցվածքագործառութային մոդելի, ՄԳ իրականացման կարգի և մեթոդաբանության կատարելագործմանն ուղղված առաջարկներ,
2. մշակի ԱՍՀՆ իրավասության ոլորտում իրականացվող շուրջ 55 ծրագրերի (ծրագրերի թիվը պայմանագրի գործողության ժամկետում կարող է փոփոխվել) ՄԳ-ի իրականացման անձնագրերը և տեղեկանքները, ներկայացնի առաջարկներ շուրջ 25 ծրագրերի՝ կիրառվող անձնագրերի կատարելագործման ուղղությամբ,
3. մշակի ԱՍՀՆ իրավասության ոլորտում իրականացվող շուրջ 55 ծրագրերի՝ մոնիթորինգային որակական և քանակական ցուցանիշները և ներկայացնի առաջարկներ շուրջ 25 ծրագրերի՝ մշակված ցուցանիշների կատարելագործման ուղղությամբ, ինչպես նաև դասակարգի (խմբավորի) այդ ցուցանիշները՝ ըստ տեսակների, վարվող քաղաքականության առաջնահերթությունների, ծրագրի գործողությունների, տեղեկատվության հավաքման և ստացման աղբյուրների, պարբերականության, ՄԳ արդյունքների օգտատերերի և այլն,
4. մշակի ՄԳ համակարգի համար անհրաժեշտ տեղեկությունների հավաքագրման մեթոդաբանությունը՝ սահմանելով ցուցանիշների համապատասխան տվյալների հավաքման աղբյուրները, մեթոդներն ու պարբերականությունը՝ ներկայացնելով անհրաժեշտ հաշվետվությունների ձևանմուշներն ու առկա ձևանմուշների կատարելագործմանն ուղղված առաջարկներ,
5. մշակի ՄԳ աշխատանքների մեջ ներգրավված աշխատակիցների պարտականությունների, իրավասության սահմանների, անհրաժեշտ գիտելիքների ու աշխատանքային ընթացակարգերի կատարելագործման ուղղությամբ առաջարկներ,
6. մշակի ՄԳ համակարգի գործառնությունն ապահովող իրավական փաստաթղթերի փոփոխությունների վերաբերյալ առաջարկներ,
7. իրականացնի նախորդ կետերում նշված աշխատանքներից յուրաքանչյուրի արդյունքների մասին՝ իր կազմած հաշվետվությունների նախագծերի ներկայացում ԱՍՀՆ ՄԳ համակարգի պատասխանատու աշխատակիցներին, սեմինար-քննարկումների կազմակերպման միջոցով,
8. իրականացնի ՄԳ էլեկտրոնային համակարգի մշակման և ներդրման համար ընտրված կազմակերպության կողմից կատարվող աշխատանքների մեթոդական

աջակցություն՝ մասնակցելով ՄԳ էլեկտրոնային համակարգի մշակման, փորձարկման և ներդրման աշխատանքների բոլոր փուլերին՝ ՄԳ-ի իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվական համակարգի բովանդակային հենքի իրացման նպատակով,

9. մասնակցի մշակված ցուցանիշների հիման վրա կատարվող ծրագրերի ընթացիկ գնահատման և ամփոփ հաշվետվությունների կազմման գործընթացին,
10. կատարած աշխատանքների արդյունքները ամփոփ կերպով ներկայացնի ԱՍՀՆ՝ ՄԳ համակարգի շահագործման համար պատասխանատու աշխատակիցներին:

Խորհրդատվական կազմակերպությունը պետք է ունենա՝

- սոցիալական պաշտպանության ոլորտի հիմնախնդիրների հետազոտության առնվազն հինգ տարվա փորձ,
- մոնիթորինգի ու գնահատման համակարգերի, ինչպես նաև տարբեր ոլորտներում իրականացվող ծրագրերի մոնիթորինգի ու գնահատման մեթոդաբանությունների մշակման փորձ,
- ՀՀ հանրային կառավարման ոլորտներում մոնիթորինգի և արդյունավետության գնահատման ծրագրերի իրականացման փորձ ունեցող բարձր որակավորման մասնագետներ, ՀՀ սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող ծրագրերին և դրանք կարգավորող իրավական դաշտին քաջածանոթ մասնագետներ,
- սոցիալական պաշտպանության ոլորտի հիմնախնդիրների, մոնիթորինգային հետազոտությունների իրականացման մեթոդաբանության, ինչպես նաև ծրագրերի արդյունավետության գնահատման ու մոնիթորինգի իրականացման համակարգերի գծով առնվազը մեկ միջազգային փորձառությամբ մասնագետ (ՀՀ հանրային կառավարման ոլորտներում մոնիթորինգի և արդյունավետության գնահատման ծրագրերի իրականացման փորձի առկայությունը կդիտվի, որպես առավելություն):

Վերը շարադրված պահանջներին համապատասխանող խորհրդատվական ընկերությունները կարող են մինչեւ **սույն թվականի սեպտեմբերի 25-ը** ներկայացնել հետաքրքրվածության հայտեր անհրաժեշտ տեղեկություններով (ընկերության վերաբերյալ համառոտ տեղեկատվություն՝ ընդհանուր աշխատանքային փորձի, այդ թվում վերջին տարիներին նմանատիպ հանձնարարականների իրականացման փորձի, վերընշված պահանջներին բավարարող անձնակազմի առկայության վերաբերյալ, աշխատակազմի կենսագրական թերթիկները եւ այլն) ստորեւ նշված հասցեով:

Հետաքրքրվածության հայտերը կարող են ներկայացվել նաեւ էլեկտրոնային փոստով:

ՀՀ Ֆինանսների նախարարության
«Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն պետական հիմնարկի
գործադիր տնօրեն՝ Է. Ավետյանին
Երեւան 0010, Տիգրան Մեծի փողոց 4
Հեռախոս. (374 11) 910581
Էլ. փոստ. info@ffpmc.am